ՄԱՅՐ ԷԹՈՒ

Անցեալ անգամ մեր ընթերցողներին հաղորդել էինք, որ յայտնի հարուստ և բարեգործ պ. Ա. Մանթաշեան 40000 ռուբլի է նուիրել Մայր Տաճարի նորոգութեան համար։ Սրբազան Տեղակալը Տ. Տ. Մեսրոպ, Կոմիտաս, Յուսիկ և Բաբգէն վարդապետներից իւր նախագահութեամբ մի յանձնաժողով է կազմել ճարտարապետների հետ բանակցութիւն սկսելու և վերանորոգութեան գործի վերայ հսկելու համար։

Մեծ պասի ընթացքում Վաղարշապատի և շրջակայ գործակալութիւնների համար քարոզիչներ են նշանակուած Տ. Տ. Կոմիտաս, Յուսիկ, Գարեգին, Բաբգէն և Լեոն վարդապետները։

Տ. Տեղակալը մի առաջադրութեամբ դիմել է Ս. Սինոդին՝ Մայր Աթոռում մոմի գործարան բանալու, որպէս զի կարելի լինի բոլոր վիճակներին այստեղից մաքուր մոմ մատակարարել։

Երևանի փոխ թեմական Տ. Յուսիկ արքեպիսկոպոս, որ Տ. Փոխարքայի դիւանում Հայոց դպրոցական կանոնադրութիւն կազմելու յանձնաժողովի անդամ էր, հոգաբարձական և կաթուղիկոսական պատգամաւորների ընտրութեան խնդրով զբաղուած լինելու պատճառով, հրաժարուեց այդ պաշտօնից. նորա տեղ Ս. Տեղակալը նշանակել է Տ. Մեսրոպ վարդապետ Տ. Մովսիսեանին, յայտնելով այս մասին Փոխարքային։

Լիանոզեան նաւթի գործարանը 200 փ. իւղ է նուի-

բել Մ. Աթոռին ելեբտրական կայարանի մեքենաների համար և 40 փ. բենզին, Բագուի գործակալ Տ. Զաւէն վարդապետի միջոցաւ։ Ս. Տեղակալը շնորհակալութեան և օրհնութեան թուղթ է ուղարկել գործանատիրոջ՝ ինժիներ պ. Ստեփան Թաղիանոսեանի միջոցով, որ գործարանի կառավարիչն է։

«Արարատ»-ի յունուարի տետրակի Սինոդի օրագրութիւնների քաղուածքների մէջ (եր. 6) Գօրու Հոգևոր կառավարութեան Բաթում տեղափոխելու առթիւ, Սինոդը, անտեղեակ հանգուցեալ կաթուղիկոսի կարգադրութեան, բացատրել էր Տփխիսի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսին, որ նա անմիջական բանակցութեան մէջ չպէտք է մտնէր Տ. Փոխարքայի հետ, այլ պէտք է դիմէր նախ իւր բարձրագոյն հոգևոր իշխանութեան։ Բայց վետրուարի քաղուածքներից (131 եր.) պարզուեց արդէն, որ Տ. Գարեգին արքեպիսկոպոսն այդ բանակցութիւնն սկսել էր հանգուցեալ կաթուղիկոսի կարգադրութեամբ։ Այստեղ ևս երկրորդում ենք այդ հանգամանքը թիւրիմացութիւնները պարզելու համար, որովհետև հայ թերթերից ոմանք («Մեր ձայնը», Հովիւ) նկատողութիւն էին արել այդ մասին։

Մեր միաբանակից Տ. Ներսէս վարդապետ Տ. Միքայէլեան խնդրում է յայտնել, որ նա Ղարաբաղի Կոնսիստորիայի անդամութիւնից արձակուել է իւր խնդրանաց համեմաս։ Այն ինչ Արարատի 1907 թ. Հոկտ.—Նոյեմբ. պաշտօնական քաղուածքն այդ մասին, եր. 870.—Սինոդն ի նկատի առեալ զմակագրական պատուէր Վեհափառ Կաթուղիկոսի թ. 1257, nr վասն արձակման Ներսէս վարդապետի Տ. Միքայէլեան յանդամութենէ Կոնսիստորիային Ղարաբաղի . . .—թիւրիմացութեան տեղիք է տուել շատերին, որպէս թէ նա արձակուած է հոգևոր իշխանութեան կողմից առանց խնդրանաց։

Տ. Մեսրոպ վարդապետ Տ. Մովսիսեան Տփխիս ուղևորուեցաւ Սրբազան Տեղակալի և միաբանութեան կողմից շնորհաւորելու Տ. Փոխարքայի օֆիցերութեան յիսնամեակը։

Վանքի գիւղատնտես պ. Կ. Մելիք Շահնազարեանց Բագուից գալով հաղորդեց, որ արդէն կազմակերպուած է մի ընկերութիւն նախաձեռնութեամբ պ. պ. Բողդան Մոսէյէվիչ Դոլուխանեանցի, Բագրատ Շիսեանցի և Աստուածատուր Վաչեանցի, 100,000 ռուբլի դրամագլխով, 200 բաժիններով, իւրաքանչիւրը 500 ռուբլի արժողութեամբ։ Ընկերութեան նպատակն է Էջմիածնի տնտեսական դրութիւնը բարւոքելու համար նրա հողերի վրայ ջուր դուրս բերել։ Ջուրը պէտք է ջրմուղ մեքենաների միջոցաւ բարձրացնեն Սև ջրից մօտ 15 արշին բարձրութեան, որ նա բնական հոսանքով կարողանայ վանքի հողերի վերի մասերը ոռոգել և միևնոյն ժամանակ այդ ջրից կարողանան օգտուել Վաղարշապատցիները, Ալիբէկլուեցիք, Զէյվա, Այլանլու և այլ գիւղերը, որոնց հողերի սահմաններով պիտի տարուի առուն։

Ընկերութիւնը ստանում է արդիւնքից միմիայն 8%, մնացածը թողնում է վանքի իրաւանց։ Ընկերութեան պայմանագիրը գրուած է և վերջնական որոշումը թողուած է ընդհանուր ժողովին։ Սպասւում է ընկերութեան կողմից եկող ինժիներ—գիդրաւլիկի առուի տեղը որոշելու և նախահաշիւը կազմելու։ Պ. գիւղատնտեսը յայտնեց նաև, որ ջրի ընկերութիւնից անկախ կազմւում է և մի երկրորդ ընկերութիւն 50,000 ր. դրամագլխով, 100 ական ռուբլի բաժիններով։ Այդ ընկերութեան նպատակն է իր ձեռքի տակ առնել Էջմիածնի սեպհական հողերը, այգիները, տաւարը և բոլոր շարժական գոյքը որոշ տարիներով և զարկ տալ տեղական արդիւնաբերութեան, այն է գինեգործութեան, բամբակի մշակութեան և այլ նպատակայարմար ճիւղերի։ Այդ ընկերութեան կա-

ղող են մասնակցել և Վաղարշապատցիք և միւս գիւղացիները և եթէ վերջիններիս դրած գումարը կհասնի 10,000 ի, այն ժամանակ ընկերութիւնը իր վարչական մի խորհուրդը կունենայ և Վաղարշապատում ու նրան կյանձնուի անմիջական հսկողութիւնը գործերի վրայ։

Տ. Տեղակալը մի գրութեամբ դիմել է ձեռնարկողներին, որպէս զի պայմանները գրաւոր առաջարկեն Սինոդին ի քննութիւն և ի հաստատութիւն։

Մեր միաբանակից Տ. Սահակ վարդապետ Ամատունի երկար տարիների քրտնաթոր աշխատութեամբ պատրաստել է ժողովրդական բարբառների մի ընդարձակ բառարան։ Բաձրապատիւ հեղինակը ոչ միայն բացատրում է բառի նշանակութիւնը, յիշում այն բարբառները, որի մէջ գործ է ածւում բառը, այլ և օրինակներ է բերում գրականութիւնից և գրի առնուած բանահիւսութիւնից։ Բագուի Կուլտուրական Միութիւնը յանձն է առել տպագրել այդ բառարանը իւր հաշուով։ Հեղինակի ցանկութիւնն է, որ իւր գործը տպագրուի Մ. Աթոռի տպարանում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ այդ տաժանելի աշխատութեան մաքուր տպագրութեան և սրբագրութեան վերայ անձամբ հսկել։

Յունուարի տեսրակի մէջ հրատարակել էինք Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսի կոնդակը, որով ցաւակցութիւն էր յայտնում ընդհանրական Հայրապետի մահուան առթիւ։ Ներկայ կոնդակով Ս. Կաթուղիկոսը համաձայնութիւն է յայտում Էջմիածնի ընդհանրական Հայրապետի ընտրութեան մասնակցելու՝ երկու աթոռների բարեկամական յարաբերութիւնը ամրապնդելու ցանկութեամբ լցուած։

Պատձէն.

Սահակ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհասանելի կամաքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամե-

նայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Տ. Գէորգայ Արքեպիսկոպոսի Սուրբէնեան, Տեղակալի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ողջոյն եղբայրական սիրոյ։ Ընկալաք զգրութիւն Կառավարչական մասին Սինոդի Ս. Էջմիածնի ի 10-ն դեկտեմբերի անցեալ ամի, ընդ համարաւ 2731, որով զեկուցանէր, եթէ ընդ այլ ծանուցողական հրովարտակ, առաքեալ է յանուն մեր և ի Դիւան փոխարքային Կովկասու յաղագս մահուան ի Տէր հանգուցեալ Ս. Կաթուղիկոսի և սահմանման ընտրութեան նոր Հայրապետի Ազգիս ։ 30 Հոկտեմբերի յառաջիկայ ամի։ Թէպէտ և չեն մեզ ծանօթ՝ նախորդք մեր մասնակցեալ են և ուրպէս ընտրութեան Տ. Տ. Մատթէոս, Գէորգայ, Մակարայ և Մկրտչի Կաթողիկոսաց ի Տէր հանգուցելոց, և թէ Սինոդ Սրբոյ Էջմիածնի առաքեալ է ըստ ժամանակին ծանուցողական հրովարտակս յանուն կաթողիկոսացն Կիլիկիոյ, մեք ի սրտէ գոհութիւն ունիմք, զի չեմք ի մոռացոնս, և ի լրումն վաղեմի բաղձանացս վասն բարւոք յարաբերութեան կրկին Աթոռոյ, Եթէ կամեսցի Տէր, և հանգամանք ժամանակին տայցեն թոյլ, առաքեցից ի մերմէ կողմանէ և ի վիճակաց Կիլիկիոյ փոխանորդս՝ ի մասնակցութիւն ընտրութեան ընդհ. Հայրապետի Ազգիս մերոյ սիրեցելւոյ, զոր ծանուցանելով եղբայրութեան Ձերում և Ձեօք Սրբոյ Սինոդին

Մնաւմ աղօթակից

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Տ. ԿԻԼԻԿԻՈՑ։

ի 17-ն յունուարի 1908 ամի
և ըստ տոմարի ՌՃԾԷ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱթոռ Կիլիկեան ի Սիս.
Թիւ 171.